— Փող չունենք, դեղ չունենք,— շարունակում է բժիշկը,— չունենք տարրական դրծիքներ: Դժուա՛ր է, դժուա՛ր է... Դուք նո՞ր էք եկել:

— Այո՛:

— Ապա ինչո՞ւ եկաք...չգիտէի՞ք...

Ու պատուհանի դէմ անձրեւը լալիս է: Մօտի սրահներում հիւանդները հառաչում են, ու տառապանքը ման է դալիս կաղալով: Գըլուխս ծանր կապարի նման վայր է ընկնում կրծքիս վրայ, աչքերս փակւում են, ու նորից լեռները խառնւում են ովկիանոսներին, նորից հիւլէն կայծկլտում է խաւարի մէջ եւ արագորէն չարժւում:

Մղձաւա՛նջ...

(Շարունակելի)

ՔԱՌԵԱԿՆԵՐ

Քո աչքերի երկնքում լոյս ու մութն են մարտընչում,
Քո շուրթերի արանքում նուշ ու նուռն են մեղանչում,
Քո այտերի ակունքում յոյս-հաւատս են մուշ մընջում:
Քո տաճարի խորքերում սիրտս սէ՛ր է մըրմնջում:

* * *

Երբոր ջուրն է փարում հողին՝ էլ ի՛նչ ահել, ի՛նչ ջահել,
Երբ որ նուռն է փարում ցօղին՝ էլ ի՛նչ ահել, ի՛նչ ջահել,
Երբ որ մութն է գըրկում լոյսին՝ էլ ի՛նչ ահել, ի՛նչ ջահել,
Երբ որ շուրթն է գըտնում շուրթին՝ էլ ի՛նչ ահել, ի՛նչ ջահել:

* * *

Երբ որ չըկայ լուսին-արեւ՝ աստղի շո՛ղն էլ մի բան է.
Երբ որ չըկայ առատ անձրեւ՝ երկնի ցո՛ղն էլ մի բան է.
Երբ որ չըկայ գահ ու գանձ՝ դատարկ յո՛յսն էլ մի բան է.
Երբ որ չըկայ սըրտի սիրած՝ սիրուն կո՛յսն էլ մի բան է:

* * *

Որպէս վըտակ՝ վըճիտ, յըստակ ու ջինջ ես,
Որպէս վըտակ՝ ծաղկոցիս մէջ մընչում ես,
Որպէս վըտակ՝ միշտ խոխոջում-անցնում ես;
Որպէս վըտակ՝ որպէս վըտակ քար սի՛րտ ես:

ՀԱՅՄԱՆ

ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Լաց եղար դու օր մը,
Երբ ես համբուրեցի քեզ,
Ու արցունքներդ աղու,
Ասացիր որ
Ես երբեք, երբեք չեմ հասկնալու:

Եւ իսկապէս.
Համբոյր, եւ արցո՞ւնք:

Բայց անցել է ահա
Երկար ժամանակ,
Եւ դու ինձ համար
Այլեւս չես այն գիրքը խոր,
Այն մատեանը փակ:

Իմ յուշերուս մէջ հիմա,
Ես կարդում եմ յստակ՝
Ճամբան, ուրկէ դու եկար,
Անցար, եւ գնացիր,
Սիրած ուրիշին,
Որ սիրէիր ե՛ւ ինձ,
Ու ինձանից յետոյ էլ
Դեռ մէկ ուրիշին:

Ու լաց ես լինում
Դու այսօր նորէն,
Երբ ուրիշն է գրկել քեզ,
Գգւում, շոյում, համբուրում,
Ու արցունքներդ սպիտակ
Որ թափւում են ցած,
Նա երբեք, երբեք չի հասկանում:

Եւ իսկապէս.
Համբոյր, եւ արցո՞ւնք:

Բայց հին պատմութիւն է այս.—
Սիրում ես մէկին, եւ լալիս ես միւսին:

Ե. Ս.

Հայ մատենագրության թուանշանային գրադարան